Կարգապահական գործ թիվ ԿԳ-17180

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մայիսի 31-ի թիվ 126-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/94-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Մարտիրոսյանին (արտոնագիր թիվ 310) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Աննա Սիմոնյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Պալատ հայտնել է, որ որ քրեական գործով իր հոր՝ Սամվել Սիմոնյանի շահերը ներկայացնելու համար, մոտավորապես 10.11.2016թ., համաձայնության է եկել փաստաբան Արմեն Մարտիրոսյանի **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** հետ: Մասնավորապես, այդ գործի շրջանակում Սամվել Սիմոնյանի վրայից ռեցիդիվը հանելուն ուղղված ծառայություններ մատուցելու համար, որի դիմաց վերջինիս հետ պայմանավորված 1000 ԱՄՆ դոլար գումարից 300 ԱՄՆ դոլար գումարը կանխավճարի տեսքով վճարել է, սակայն չի հիշում, թե այդ կապակցությամբ փաստաբանի հետ պայմանագիր կնքվել է, թե՝ ոչ, իսկ փաստաբանը, թեպետ պնդում է դրա առկայության մասին, բայց հրաժարվում է դրա օրինակը տրամադրելուց:

Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբան Արմեն Մարտիրոսյանը քրեական գործով ոչինչ չի արել, ընդամենը ներկա է գտնվել 3-4 դատական նիստերի, որից հետո 09.07.2017թ. հայտնել է գործից իր հրաժարվելու մասին, քանի որ չի կարողանում ռեցիդիվի լուծումը գտնել, սակայն չի վերադարձնում ստացված գումարը:

Դիմողը նաև նշել է, որ ձայնագրել է Արմեն Մարտիրոսյանի հետ իր խոսակցությունը, իսկ ձայնագրությունը դիմումին կից ներկայացնելով՝ խնդրել է քննարկել վերջինիս վարքագիծը

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 17.11.2017թ. թիվ 450-Ա/ԿԳ-17180 որոշմամբ փաստաբան Արմեն Մարտիրոսյանի (արտոնագիր թիվ 310) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.8., 3.5.5, 3.8.3 և 3.8.5(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

22.11.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է և հաստատել դիմումում նշված հանգամանքները: Նա նշել է, որ Արմեն Մաարտիրոսյանը պետք է միայն Սամվել Սիմոնյանի վրայից ռեցիդիվը հաներ և մինչև գործը վերցնելը ծանոթ է եղել բովանդակությանը և ասել է որպեսզի հրաժարվի հանրային պաշտպանից: Փաստաբան Արմեն Մարտիրոսյանը նշել է, որ գործը կլինի, հայտնել է, որ լուծումը գտել է և դիմում է ներկայացրել վճռաբեկ դատարան: Դիմողը նշել է նաև, որ Արմեն Մարտիրոսյանը մի քանի դատական նիստերի է մասնակցել և նիստի ընթացքում չի խոսել, իսկ հետագայում արդեն հայտնել է, որ չի կարող գործը ստանձնել:

Դիմողը հայտնել է, որ պահանջել է պայմանագիրը, սակայն Արմեն Մարտիրոսյանը հրաժարվել է ներկայացրել պայմանագրի օրինակը:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Արմեն Մարտիրոսյանը ներկայացրել է գրավոր առարկություն, որում նշել է, որ Աննա Սիմոնյանի կողմից դիմումում նշված փաստերն աղավաղված են ու ներկայացվել են բացառապես իր՝ որպես փաստաբանի, հեղինակությունը ոտնահարելու նպատակով և Դիմողը իր հոր հետ իր պատիվը և արժանապատվությունը արատավորելու սպառնալիքով փորձում են շորթել մատուցված ծառայությունների դիմաց իրեն վճարած չնչին գումարը, որը պայմանագրով ստացել է որպես կանխավճար:

Ըստ Պատասխանողի իրականությունն այն է, որ Աննա Սամվելի Սիմոնյանի հետ ինքը 12.08.2016թ. կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, համաձայն որի պարտավորվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԿԴ/0136/01/15 քրեական գործով պաշտպանել վերջինիս հոր՝ նախկինում վեց կամ յոթ անգամ թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար դատապարտված Սամվել Սիմոնյանի շահերը: Թեև Աննա Սիմոնյանի հետ ինքը պայմանավորվել էր, որ իր ծառայությունների դիմաց պետք է իրեն վճարվի 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, սակայն Ա. Սիմոնյանը, պատճառաբանելով, որ ամբողջ ընտանիքի հոգսը

իր վրա է, այդ թվում՝ հորը դեղեր ու սննդամթերք հասցնելու պարտականությունը, իրեն խնդրել է, որպեսզի 600 ԱՄՆ դոլարով պաշտպանի հոր շահերը: Ինքը, մտնելով վերջինիս դրության մեջ, համաձայնվել է: Թեև Աննա Սիմոնյանի հետ պայմանավորվել էին, որ նա պետք է միանվագ վճարի պայմանավորված գումարը, սակայն նրա խնդրանքով ինքը կրկին համաձայնվել է գործը սկսել 300 ԱՄՆ դոլար իրեն որպես կանխավճար վճարելու պայմանով, որից՝ 50. 000 ՀՀ դրամ գործի նյութերին ծանոթանալու համար և 200 ԱՄՆ դոլար դատարանում հորը պաշտպանելու համար: Մնացած 300 ԱՄՆ դոլար գումարն Աննա Սիմոնյանը պարտավորվել է վճարել երկուսից երեք ամսվա ընթացքում, սակայն այդպես էլ ոչ մի գումար չի վճարել, իսկ պայմանագիրը կնքելուց մեկ տարի անց հետ է պահանջում գումարը՝ առանց հաշվի առնելու մեկ տարվա ընթացքում իր կատարած աշխատանքները:

Նա նաև նշել է, որ Սամվել Սիմոնյանի վրայից ռեցիդիվը հանելու ուղղությամբ դրական արդյունքների հասնելու վերաբերյալ ոչ մի խոստում չի տվել, ինչի մասին նշված է նաև պայմանագրի 5-րդ կետում:

Պատասխանողը հայտնել է նաև, որ թեև Աննա Սիմոնյանը դիմումում հայտնել է իբր չի հիշում պայմանագիր կնքվել է արդյոք իրենց միջև, թե՝ ոչ, մինչդեռ դիմումատուն այն հազվագյուտ հաճախորդներից է եղել, որ մանրակրկիտ ուսումնասիրել է իրենց միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը և ի տարբերություն շատ հաճախորդների, որոնց չի էլ հետաքրքրել պայմանագիրը, պահանջել ու ստացել է պայմանագրի իր օրինակը և այժմ, հույս ունենալով, որ ինքը պայմանագիրը պահպանած չի լինի, փորձել է այդ հիմքով նույնպես խախտում արձանագրել իր գործողություններում:

Մի քանի նիստերի մասնակցելու վերաբերյալ Պատասխանողը հայտնել է, որ մասնակցել է Երևան քաղաքի Ավան ն Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում Սամվել Սիմոնյանի և ևս վեց հոգու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասով քննվող թիվ ԵԿԴ/0136/01/15 քրեական գործով նշանակված դատական նիստերին և շուրջ մեկ տարի հաճախել է հիշյալ գործով դատական նիստերին, որոնք ըստ էության չեն կայացել ու անընդհատ հետաձգվել են: Նա նաև նշել է, որ առ այսօր տվյալ գործին մասնակցելու համար ծանուցագրեր է ստանում: Ինչ վերաբերում է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան գնալուն, ապա՝ իրականում Դիմողի խնդրանքով ու վերջինիս միջոցներով է մեկնել Արմավիր թիվ 0131/01/13 քրեական գործի նյութերի պատճենները ստանալու նպատակով: Ինքն Արմավիր մեկնելու օրը դիմում է ներկայացրել դատարան և պայմանավորվել, որ առաջիկա օրերին կներկայանա պատճենները ստանալու համար, սակայն այդպես էլ չեն մեկնել Արմավիր, քանի որ Արմավիր տանելու պարտավորությունը ստանձնել էր Աննա Սիմոնյանը, սակայն այդպես էլ այդ գործին վերջինս ձեռնամուխ չի եղել:

Անդրադառնալով իր և Դիմողի միջև տեղի ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրության, որտեղ ինքը խոստացել է վերադարձնել 200 ԱՄՆ դոլար, կամ հայտնել է, որ դատական նիստի ժամանակ խոսելու բան չկար դրա համար էլ չի խոսել, Պատասխանողը հայտնել է, որ ինչպես նշել է հիմնականում դատական նիստերը տարբեր պատճառաբանություններով անընդհատ հետաձգվել են, երեք կամ չորս նիստ կայացել է և տևել է ընդամենը մոտ 10 րոպե, ուստի իրականում այդ նիստերի ընթացքում որևէ գործողություն

կատարելու հնարավորություն չի եղել: Նա նշել է, որ շուրջ 10-ից 15 անգամ գնացել է Երևանն քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան և ինչ հնարավոր է եղել արել է Սամվել Սիմոնյանի համար:

Պատասխանողը նաև նշել է, որ գումարը վերադարձնելու մտադրություն ընդհանրապես չի ունեցել և, որ որպեսզի կարճ կապեր հեռախոսով նրան հայտնել է, որ ստացած 300 դոլարից 200-ը կվերադարձնի: Ընդհակառակը Աննա Սիմոնյանն էր պարտավոր իրեն վճարել պայմանավորված գումարի մնացած մասը ինչը չի արել, իսկ ինքն էլ տեսնելով, որ ռեցիդիվի վերաբերյալ իր կողմից օրենքների ուսումնասիրությունները, բազմաթիվ փաստաբանների, քննիչների ու դատախազների հետ խորհրդակցություններն արդյունք չեն տալիս, այլևս չի պահանջել գումար և այդ մասով հայտնել է, որ չի ստացվում համապատասխան լուծում գտնել, սակայն նշել է, որ ինքը չի հրաժարվել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում թիվ ԵԿԴ/0136/01/15 քրեական գործով Սամվել Սիմոնյանի շահերը պաշտպանելուց: Սամվել Սիմոնյանը տեսնելով, որ ռեցիդիվը հանելու գործը չի ստացվում հրաժարվել է իր ծառայություններից և հայր ու աղջիկ իրենց տված չնչին գումարը, որ ծախսել էր տրանսպորտի վրա սկսել են հետ ուզել:

Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և առարկել է Դիմողի կողմից ներկայացված փաստերը: Նա նաև նշել է, որ Դիմողի հորը ճանաչել է շատ վաղուց, որ Դիմողի հորը այցելել է դատապարտյալների հիվանդանոցում և որպես բարեկամ է ներկայացել, որպեսզի թույլատրեն տեսնել նրան: Այնուհետև ռեցիդիվի խոսակցություն է եղել և նա նշել է, որ որպեսզի ազատ ելք ու մուտք անի իր մոտ հարկավոր է, որ ներգրավվի քրեական գործով: Նա նաև նշել է, որ 5-6 անգամ գնացել է մեկուսարան, իսկ ռեցիդիվի մասով բացի ուսումնասիրություններից այլ բան չի կատարել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

22.01.2018թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանը կազմել է եզրակացություն:

24.01.2018թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի մայիսի 31-ին, ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ*

այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 12.08.2016 թվականին Դիմողի և Պատասխանողի միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով վերջինս պարտավորվել է պաշտպանել Սամվել Սիմոնյանի շահերը առաջին ատյանի դատարանում:
2. Պատասխանողը պետք է նաև իրավական օգնություն տրամադրեր Սամվել Սիմոնյանին ռեցիդիվի հետ կապված խնդրով:
3. Դիմողը Պատասխանողին վճարել է 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար:
4. Թիվ ԵԿԴ/0136/01/15 քրեական գործով փաստաբան Արմեն Մարտիրոսյանը ներկայացրել է Դիմողի հոր՝ Սամվել Սիմոնյանի շահերը:
5. Պատասխանողը 09.07.2017 լուծել է Դիմողի հետ կնքած պայմանագիրը:

Նշված փաստերը հաստատվում են Դիմողի և Պատասխանողի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով, Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արմեն Մարտիրոսյանի (արտոնագիր 310, ստացված՝ 16.03.1999թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (2 ավարտված վարույթ և 1 ընթացիկ վարույթ)

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Մարտիրոսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.1.8, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. <u>Կանոնագրքի 2.7.2 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման մասով.</u>

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Վերլուծելով նշված կանոնները Խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվում է, որ Պատասխանողը ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Դիմողի հետ, որով ստանձնել է պարտավորություն Դիմողի շահերը ներկայացնել առաջին ատյանի դատարանում: Դիմողը մատուցման ենթակա ծառայությունների համար Պատասխանողին է վճարել 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար՝ որպես կանխավճար: Սույն կարգապահական գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվում է նաև, որ Պատասխանողը պետք է իրավական օգություն տրամադրեր ռեցիդիվի մասով, սակայն Դիմողի և Պատասխանողի միջև կնքված պայմանագրով Պատասխանողը չի հստակեցրել իր կողմից կատարման ենթակա գործողությունների բնույթը:

Խորհուրդը արձանագրում է, որ Պատասխանողը, ստանձնելով իրավաբանական ծառայությունների մատուցման պարտավորություն, պայմանագրի կնքման պահից մինչև Դիմողի կողմից պայմանագրի միակողմանի լուծման պահը փաստացի չի իրականացրել Դիմողի իրավական խնդրի, մասնավորապես ռեցիդիվի հետ կապված խնդրի, լուծմանն ուղղված կոնկրետ գործողություններ:

Նկատի ունենալով, որ Պատասխանողին վճարված 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար գումարի դիմաց Պատասխանողը պետք տրամադրեր նաև ռեցիդիվի հետ կապված իրավական օգնություն, որը չի տրամադրվել, ուստի Պատասխանողը պետք է վերադարձներ ստացված հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Մարտիրոսյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 և 3.8.5 (1) ենթակետերի խախտում, ինչի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

7.2. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>.

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.
3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
4) տուգանք (…):

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Խորհուրդը, հաշվի առնելով Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, այդ թվում՝ փաստաբանի անձը, գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

7.3. <u>Կանոնագրքի 3.1.8, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի խախտման մասով.</u>

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Կանոնագրքի 3.8.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրում, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*
1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են,
2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,
3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,
4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,
5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,
6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Անդրադառնալով Կանոնագրքի 3.1.8, 3.5.5 և3.8.3 ենթակետերի խախտման հանգամանքին Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կհաստատեն փաստաբան Պատասխանողի կողմից այս ենթակետերի խախտման փաստը:

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝ *Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, տվյալ դեպքում Դիմողը:*

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի*:

Կանոնագրքի 3.1.8, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի խախտման հանգամանքը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության պարագայում Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն այդ մասով ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված կետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Մարտիրոսյանին (արտոնագիր՝ 310) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Արմեն Մարտիրոսյանի (արտոնագիր՝ 310) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Փաստաբան Արմեն Մարտիրոսյանի (արտոնագիր՝ 310) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.8, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի մասով՝ կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Սիմոն Բաբայան**

31 մայիսի 2018թ.
թիվ ԿԳ/94-Ա
ք. Երևան